ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՈՆԸ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԹԵՄՈՒՄ

Օգոստոսի 16-ին, Սուրբ Աստվածածնի վերափոխման տոնին, Գեղարքունիքի մարզի Հացառատ գյուղի Ս. Աստվածածին եկեղեցում, ձեռամբ թեմի բարեխնամ առաջնորդ Անանիա եպս. Արաբաջյանի, տեղի ունեցավ Սուրբ Սեղանի օծում, որին և հաջորդեց սարկավագական ձեռնադրություն՝ խարտավիլակությամբ Գնել քահանա Մարտիրոսյանի: Սարկավագ ձեռնադրվեցին Հրայր Խաչատրյանը, Գագիկ Թովմասյանը և Հրանտ Ներսիսյանը: Ձեռնադրությունից անմիջապես հետո Ս. Աստվածածին եկեղեցուն կից Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում կատարվեց խաղողօրհնեքի արարողություն: Սրբազան Հոր օրհնած խաղողը բաժանվեց Հացառատի բազմամբոխ հավատավոր ժողովրդին:

Հացառատից Անանիա եպս. Արաբաջյանը իրեն ուղեկցողների, այդ թվում՝ նոր ձեռնադրված սարկավագների հետ միասին ուղևորվեց Գավառի մեկ այլ գյուղ՝ Ծովազարդ, ուր գյուղի համայնքի հավատավոր զավակների առջև իր դռները պիտի բացեր Ս. Կարմիր Ավետարան եկեղեցին: Բարի և ազգօգուտ գործ էին կատարել Ֆրունզիկ և Դերենիկ Խաչատրյան եղբայրները՝ իրենց համագյուղացիներին բացառիկ նվեր՝ Աղոթքի տուն կառուցել նվիրելով, որ ծառայելու է Աստծուն և ժողովրդին: Եկեղեցու Ս. Սեղանն ու սյուները օծելուց հետո, Անանիա Արբազանը իր խոսքն ուղղեց հավատացյալներին՝ կարևորելով եկեղեցաշինության գործը մեր օրերում, արժևորելով Խաչատրյան եղբայրների նվիրական գործը:

Եկեղեցու օծումն ավարտելուց հետո, թափորով եկեղեցի բերվեց 1865 թվականի մի Ավետարան՝ բերված Մուշից, որը պատկանել է Վարդեր Վարդապետին և որը Մեծ եղեռնի ժամանակ այստեղ գաղթած մշեցիների պահապանն ու հովանավորն է եղել:

Նորաօծ եկեղեցում մկրտության արարողությունից հետո գյուղում սկիզբ առավ ժողովրդական տոնախմբությունը:

Հրայր սրկ. Խաչատրյան